# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ԱՄ-2019/37**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.02.2019թ. թիվ 27/26-3/2284-19 գրությամբ «Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/503 գրության հիման վրա, 14.02.2019թ. թիվ 27/26-3/2284-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

## 2. «Էնջլ Սուր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էնջլ Սուր» ՍՊՆ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Էնջլ Սուր» ՍՊԸ-ն համատեղ «Արմկոֆե» ՍՊԸ-ի հետ /համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա/ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 20.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.2 կետի համաձայն՝ որոշում է կայացվել ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ ներկայացված նմանատիպ պայմանագրում և այդ պայմանագրի հանձման-ընդունման արձանագրությունում որպես գնման առարկա նշված է փաթեթավորման ծառայության մատուցումը, այնինչ հարկային հաշիվներում գնման առարկան ապրանք է, ինչպես նաև վերոնշյալ ապրանքի պատշաճ կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությամբ նշված մատակարարման ժամկետները չեն համապատասխանում հարկային հաշիվներով ապրանքների մատակարարման ժամկետներին: Ուստի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 25.01.2019թ. ծանուցել մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Քանի որ մասնակիցը դիմում-հայտարարության մեջ չի նշել կոնսորցիումի անդամի իրական շահառուներին, գնահատող հանձնաժողովը որոշեց շտկում պահանջել մասնակից; Սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է պահանջվող դիմում-հայտարարությունը և ներկայացրել է բացատրություն «մասնագիտական փորձառություն» հիմնավորող

փաստաթղթերի անհամապատասխանությունների վերաբերյալ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի համարվել վերոնշյալ անհամապատասխանությունների շտկում և 31.01.2019թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Էնջել սուր» ՍՊԸ-ի և «Արմկոֆե» ՍՊԸ-ի համատեղ հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Էնջել սուր» ՍՊԸ-ն համատեղ «Արմկոֆե» ՍՊԸ-ի հետ /համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա/ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից, այնուհետև գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն արձանագրվել էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված նմանատիպ պայմանագրում և այդ պայմանագրի հանձման-ընդունման արձանագրությունում որպես գնման առարկա նշված է փաթեթավորման ծառայության մատուցումը, այնինչ հարկային հաշիվներում գնման առարկան ապրանք է, ինչպես նաև վերոնշյալ ապրանքի պատշաճ կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությամբ նշված մատակարարման ժամկետները չեն համապատասխանում հարկային հաշիվներով ապրանքների մատակարարման ժամկետներին:

Ուստի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 25.01.2019թ. ծանուցել մասնակցին՝ սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Քանի որ մասնակիցը դիմում-հայտարարության մեջ չի նշել կոնսորցիումի անդամի իրական շահառուներին, գնահատող հանձնաժողովը որոշեց շտկում պահանջել մասնակից:

Սահմանված ժամկետում ներկայացվել է պահանջվող դիմում-հայտարարությունը, իսկ մասնագիտական փորձառության մասով «Արմկոֆե» ՍՊԸ-ն ներկայացրել է բացատրություն «մասնագիտական փորձառություն» հիմնավորող փաստաթղթերի անհամապատասխանությունների վերաբերյալ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի համարվել վերոնշյալ անհամապատասխանությունների շտկում և 31.01.2019թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է:

«Արմկոֆե» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 29.01.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել շտկված դիմում-հայտարարությունը, իսկ «մասնագիտական փորձառություն» հիմնավորող փաստաթղթերի անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացրել հիմնավորում-պարզաբանում, մասնավորապես՝ «Արմկոֆե» ՍՊԸ-ն մեծ քանակությամբ սուրճ է ներմուծում 3-րդ երկրներից: Այն զբաղվում է ոչ մշակված սուրճի վերամշակմամբ, փաթեթավորմամբ և վաճառքով: Վաճառքը կայանում է և շուկայում, և անհատ ձեռնարկատերերին: Պատվիրատուն «Արմկոֆե» ՍՊԸ-ից ապրանք է գնել և պատվիրել փաթեթավորում, այդ իսկ պատճառով հաշիվ ապրանքագրերի մեջ գրված է ապրանք և ծառայության բառը շեշտված չէ: Իսկ ինչ վերաբերվում է օրերին, պատվիրատուի հետ նախապես համաձայնության գալով հաշիվ ապրանքագրերը գրվել է ավելի վաղ, սակայն ապրանքը մատակարարվել է պատվիրատուի ցանկությամբ»:

«Էնջել սուր» ՍՊԸ-ի և «Արմկոֆե» ՍՊԸ-ի միջև 13.12.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի (կցվում է) 2.2-րդ կետի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթղթեր ունենալու և ներկայացնելու պահանջը

դրված է «Արմկոֆե» ՍՊԸ-ի, այլ ոչ թե «Էնջել սուր» ՍՊԸ-ի վրա: Այլ կերպ ասած, նշված պարտավորությունը կրում էր «Արմկոֆե» ՍՊԸ-ն:

Հենց այս պատճառով՝ ստանալով ծանուցում կատարելու շտկում ներկայացված մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթղթերում, «Արմկոֆե» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է 29.01.2019թ., «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել հիմնավորում-պարզաբանում՝ արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ:

«Էնջել Սուր» ՍՊԸ-ն 13.12.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի պայմաններում ոչ իրավազոր էր ներկայացնելու մասնագիտական փորձառությունը հիմնավորող փաստաթղթեր, ոչ էլ կատարել որևէ շտկում նշված փաստաթղթերում:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և «Էնջել Սուր» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Էնջել Սուր» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/37 ընթացակարգի շրջանակներում 19.02.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

**3. «Արմկոֆե» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Արմկոֆե» ՍՊՆ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արմկոֆե» ՍՊԸ-ն «Էնջել Սուր» ՍՊԸ-ի հետ համատեղ /համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա/ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 20.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.2 կետի համաձայն՝ որոշում է կայացվել ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ ներկայացված նմանատիպ պայմանագրում և այդ պայմանագրի հանձման-ընդունման արձանագրությունում որպես գնման առարկա նշված է փաթեթավորման ծառայության մատուցումը, այնինչ հարկային հաշիվներում գնման առարկան ապրանք է, ինչպես նաև վերոնշյալ ապրանքի պատշաճ կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությամբ նշված մատակարարման ժամկետները չեն համապատասխանում հարկային հաշիվներով ապրանքների մատակարարման ժամկետներին: Ուստի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 25.01.2019թ. ծանուցել մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Քանի որ մասնակիցը դիմում-հայտարարության մեջ չի նշել կոնսորցիումի անդամի իրական շահառուներին, գնահատող հանձնաժողովը որոշեց շտկում պահանջել մասնակից; Սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է պահանջվող դիմում-հայտարարությունը և ներկայացրել է բացատրություն «մասնագիտական փորձառություն» հիմնավորող փաստաթղթերի անհամապատասխանությունների վերաբերյալ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի համարվել վերոնշյալ անհամապատասխանությունների շտկում և 31.01.2019թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Էնջել սուր» ՍՊԸ-ի և «Արմկոֆե» ՍՊԸ-ի համատեղ հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Էնջել սուր» ՍՊԸ-ն համատեղ «Արմկոֆե» ՍՊԸ-ի հետ /համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա/ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից, այնուհետև գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն արձանագրվել էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված նմանատիպ պայմանագրում և այդ պայմանագրի հանձման-ընդունման արձանագրությունում որպես գնման առարկա նշված է փաթեթավորման ծառայության մատուցումը, այնինչ հարկային հաշիվներում գնման առարկան ապրանք է, ինչպես նաև վերոնշյալ ապրանքի պատշաճ կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությամբ նշված մատակարարման ժամկետները չեն համապատասխանում հարկային հաշիվներով ապրանքների մատակարարման ժամկետներին:

Ուստի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 25.01.2019թ. ծանուցել մասնակցին՝ սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Քանի որ մասնակիցը դիմում-հայտարարության մեջ չի նշել կոնսորցիումի անդամի իրական շահառուներին, գնահատող հանձնաժողովը որոշեց շտկում պահանջել մասնակից:

Սահմանված ժամկետում ներկայացվել է պահանջվող դիմում-հայտարարությունը, իսկ մասնագիտական փորձառության մասով «Արմկոֆե» ՍՊԸ-ն ներկայացրել է

բացատրություն «մասնագիտական փորձառություն» հիմնավորող փաստաթղթերի անհամապատասխանությունների վերաբերյալ, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի համարվել վերոնշյալ անհամապատասխանությունների շտկում և 31.01.2019թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է:

«Արմկոֆե» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 29.01.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին է ներկայացրել շտկված դիմում-հայտարարությունը, իսկ «մասնագիտական փորձառություն» հիմնավորող փաստաթղթերի անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացրել հիմնավորում-պարզաբանում, մասնավորապես՝ «Արմկոֆե» ՍՊԸ-ն մեծ քանակությամբ սուրճ է ներմուծում 3-րդ երկրներից: Այն զբաղվում է ոչ մշակված սուրճի վերամշակմամբ, փաթեթավորմամբ և վաճառքով: Վաճառքը կայանում է և շուկայում, և անհատ ձեռնարկատերերին: Պատվիրատուն «Արմկոֆե» ՍՊԸ-ից ապրանք է գնել և պատվիրել փաթեթավորում, այդ իսկ պատճառով հաշիվ ապրանքագրերի մեջ գրված է ապրանք և ծառայության բառը շեշտված չէ: Իսկ ինչ վերաբերվում է օրերին, պատվիրատուի հետ նախապես համաձայնության գալով հաշիվ ապրանքագրերը գրվել է ավելի վաղ, սակայն ապրանքը մատակարարվել է պատվիրատուի ցանկությամբ»:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է նկատի ունենալ, որ «Արմկոֆե» ՍՊԸ-ն զբաղվում է չմշակված սուրճի ներկրմամբ, քանի որ ընկերությունն ունի համապատասխան սարքավորումներ և զբաղվում է նաև մշակմամբ և փաթեթավորմամբ:

08.02.2015թ. կնքվել է պայմանագիր «Արմկոֆե» ՍՊԸ-ի և Ա/Ձ Աբգար Ավետիսյանի միջև, համաձայն որի «Արմկոֆե» ՍՊԸ-ն պարտավորվել է 0.5 կգ-անոց փաստաթղթի՝ 10 315 կգ մշակված և փաթեթավորված սուրճ մատակարարել Ա/Ձ Աբգար Ավետիսյանին:

Այնուհետև Ա/Ձ Աբգար Ավետիսյանի կողմից ապրանքը գտնել է և պատվիրվել նաև համապատասխան փաթեթավորումը, այդ իսկ պատճառով հաշիվ-ապրանքագրում ծառայություն բառը նշված չի եղել:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և «Արմկոֆե» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման

գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Արմկոֆե» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/37 ընթացակարգի շրջանակներում 19.02.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր մասնակցությունը:

**4. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/503 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգում «Էնջլ Սուր» ՍՊԸ-ն համատեղ «Արմկոֆե» ՍՊԸ-ի հետ /համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա/ գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով «Էնջլ Սուր» ՍՊԸ-ին համակարգի միջոցով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Էնջլ Սուր» ՍՊԸ-ն իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում, սակայն դրանց մեջ առկա են եղել անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և սահմանված կարգով համակարգի միջոցով ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

«Էնջլ Սուր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է «Էնջլ Սուր» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/37 ընթացակարգի շրջանակներում 19.02.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**5. ՍՑ-ԱՄ-2019/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ՍՑ-ԱՄ-2019/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 20.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 16.01.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ կոնսորցիումի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրում և պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունում որպես գնման առարկա նշված է փաթեթավորման ծառայության մատուցումը, այնինչ հարկային հաշիվներում գնման առարկան ապրանք է, ինչպես նաև վերոհիշյալ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությամբ նշված մատակարարման ժամկետները չեն համապատասխանում հարկային հաշիվներով ապրանքների մատակարարման ժամկետներին:

Կոնսորցիումին 25.01.2019թ. ծանուցվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 16.01.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի 31.01.2019թ. կայացրած որոշմամբ «Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ կոնսորցիումի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

**6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.02.2019թ. թիվ 27/26-3/2284-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/503 գրությունը և կից փաստաթղթերը, «Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունների դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային

արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի

հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 23-րդ և 24-րդ կետերի համաձայն՝

23. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

24. Արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 20.12.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 16.01.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ կոնսորցիումի կողմից ներկայացված նմանատիպ

պայմանագրում և պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունում որպես գնման առարկա նշված է փաթեթավորման ծառայության մատուցումը, այնինչ հարկային հաշիվներում գնման առարկան ապրանք է, ինչպես նաև վերոհիշյալ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությամբ նշված մատակարարման ժամկետները չեն համապատասխանում հարկային հաշիվներով ապրանքների մատակարարման ժամկետներին:

Կոնսորցիումին 25.01.2019թ. ծանուցվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 16.01.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի 31.01.2019թ. կայացրած որոշմամբ «Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ կոնսորցիումի կողմից չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ Աճուրդի հրավերով սահմանվել է, որ ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փաթեթավորման ծառայությունների մատուցված լինելը:

«Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունները Աճուրդին հայտ են ներկայացրել կոնսորցիումով:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները:

Աճուրդի հրավերի 2-րդ կետի 2.7-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

«Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունների միջև 13.12.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի համաձայն՝ Արմկոֆե» ՍՊԸ-ն ներդնում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ մասնագիտական փորձառություն:

«Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագիր ներկայացվել է «Արմկոֆե» ՍՊԸ-ի և Ա/Ձ Աբգար Ավետիսյանի միջև 08.02.2015թ. կնքված ապրանքի փաթեթավորման ծառայությունների մատուցման պայմանագիրը: Դրա հետ մեկտեղ ներկայացվել են նաև պայմանագրի հաշիվ-ապրանքագրերը և պայմանագրի կատարման վերաբերյալ կողմերի միջև կնքված հանձնման-ընդունման արձանագրությունը:

25.01.2019թ. կոնսորցիումին ծանուցվել է վերջինիս կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ. մասնավորապես՝ կոնսորցիումի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրում և պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունում որպես գնման առարկա նշված է փաթեթավորման ծառայության մատուցումը, այնինչ հարկային հաշիվներում գնման առարկան ապրանք է («սուրճ բոված աղացած»), ինչպես նաև վերոհիշյալ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրությամբ նշված մատակարարման ժամկետները չեն համապատասխանում հարկային հաշիվներով ապրանքների մատակարարման ժամկետներին:

Կոնսորցիումին առաջարկվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ի պատասխան վերոհիշյալ ծանուցմանը՝ «Արմկոֆե» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Արմկոֆե» ՍՊԸ-ն մեծ քանակությամբ սուրճ է ներմուծում 3-րդ երկրներից: Ընկերությունը զբաղվում է ոչ մշակված սուրճի վերամշակմամբ, փաթեթավորմամբ և վաճառքով: Վաճառքը կայանում է և շուկայում և անհատ ձեռնարկատերերին: Պատվիրատուն «Արմկոֆե» ՍՊԸ-ից ապրանք

է գնել և պատվիրել փաթեթավորում, այդ իսկ պատճառով հաշիվ-ապրանքագրերի մեջ գրված է ապրանք և ծառայություն բառը շեշտված չէ: Իսկ ինչ վերաբում է օրերին, պատվիրատուի հետ նախապես համաձայնության գալով հաշիվ-ապրանքագրերը գրվել են ավելի վաղ, սակայն ապրանքը մատակարարվել է պատվիրատուի ցանկությամբ:

Գնահատող հանձնաժողովի կողմից վերոհիշյալ գրությունը չի համարվել որպես արձանագրված անհամապատասխանության շտկում և կոնսորցիումի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերն արձանագրում եմ, որ կոնսորցիումի կողմից որպես հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ որպես նմանատիպ ներկայացված պայմանագրի առարկա նշված է փաթեթավորման ծառայությունների մատուցումը, մինչդեռ պայմանագրի շրջանակներում դուրս գրված հաշիվ-ապրանքագրերում որպես առարկա նշված է ապրանքի մատակարարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հրավերի 7-րդ կետի 7.12-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ հրավերի համաձայն՝ կոնսորցիումի հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Տվյալ դեպքում «Էնջլ Սուր» և «Արմկոֆե» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի պայմանագրի համաձայն՝ հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշն ապահովելու պարտականությունը դրված է «Արմկոֆե» ՍՊԸ-ի վրա, հետևաբար գտնում եմ, որ «Արմկոֆե» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է «Էնջլ Սուր» ՍՊԸ-ին, ապա գտնում եմ, որ առկա չեն վերջինիս նշված ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ համաձայն կոնսորցիումի պայմանագրի՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշն ապահովելու պարտականությունը դրված է եղել միայն «Արմկոֆե» ՍՊԸ-ն:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.02.2019թ. թիվ 27/26-3/2284-19 գրությամբ՝

- «Արմկոֆե» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմկոֆե» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:
- «Էնջլ Սուր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ